

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին վարձակալությամբ գլխամասային գրասենյակի տարածք տրամադրելու»

բաց մրցույթի հայտարարություն/ծանուցում

Մրցույթի անվանում՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին վարձակալությամբ գլխամասային գրասենյակի տարածք տրամադրելու բաց մրցույթ

Մրցույթի կազմակերպիչ՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Մրցույթի անցկացման վայր՝ ք. Երևան, Ագաթանգեղոսի 2ա

Հայտերն ընդունելու սկզբնաժամկետ՝ 10 դեկտեմբերի, 2021թ., ժամը՝ 09:00

Հայտերն ընդունելու վերջնաժամկետ՝ 17 դեկտեմբերի, 2021թ. ժամը՝ 17:00

Մրցույթի հայտերի ընդունման ժամեր ըստ օրերի՝ երկուշաբթիից ուրբաթ, ժամը՝ 09:00–ից 18:00, բացի ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից

Մրցույթի հայտերը բացելու օրը և ժամը՝ 22 դեկտեմբերի, 2021թ., 14:00:

Մրցույթի հայտերն ամփոփելու նիստի օրը և ժամը՝ 28 դեկտեմբերի, 2021թ., 14:00

Ծածկագիր՝ 21/004

Հարգելի Հայտատու,

Դուք հրավիրվում եք մասնակցելու «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ին վարձակալությամբ գլխամասային գրասենյակի տարածք տրամադրելու բաց մրցույթին:

Տեղեկացնում ենք, որ մրցույթի կանոնակարգին կարող եք ծանոթանալ, ինչպես նաև ստանալ դրա պատճենը՝ մոտենալով «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ գլխամասային գրասենյակ ք. Երևան, Ագաթանգեղոս 2Ա հասցեով:

Մրցույթի պայմաններ

Տարածքի նկատմամբ պարտադիր պահանջներ.

1. Նույն հարկի վրա գտնվող՝ նվազագույնը 1,100 - 1,200 քմ գրասենյակային տարածքի վարձակալության հնարավորություն՝ բաց տարածքի (open space) սկզբունքով 135 աշխատակից տեղավորելու համար: Ծայրահեղ դեպքում հնարավոր է 2 հարկի վարձակալություն, այն պայմանով, որ վարձակալվում են շենքի առաջին և դրան հարող հարկը և դրանք բավարարում են մյուս պահանջներին:
2. Տարածքը համապատասխանում է առողջապահական (ներառյալ՝ ՔՈՎԻԴ 19-ի կանխարգելման համար անհրաժեշտ պայմաններ, օրինակ՝ խոհանոցում և



գուգարաններում սենսորներով ծորակների/սարքավորումների առկայություն) և անվտանգության (ներառյալ՝ սեյսմիկ և տարհանման) բոլոր պահանջներին:

3. Բաց հարկի/բաց տարածքի (open-floor/open space) սկզբունքներին և ժամանակակից չափանիշներին համապատասխանող ու որակյալ նյութերի օգտագործմամբ ամբողջությամբ վերանորոգված տարածք (ներառյալ՝ գործող մալուխավորում, էլեկտրականություն և ինտերնետ/ցանցեր): Հատակի, առաստաղի, ներկման, լուսավորության ապահովման համար պետք է օգտագործված լինեն որակյալ նյութեր: Կահույք և սեղաններ ապահովել անհրաժեշտ չէ:
4. Օդափոխության և կլիմայի կառավարման (ջեռուցում և զովացում) որակյալ կենտրոնացված համակարգեր, որոնք մշտապես ապահովում են թարմ օդի ներհոսք և հետագա շրջանառություն:
5. Անհրաժեշտ են տարբեր չափերի ընդհանուր մոտ 100 քմ մակերեսով հանդիպումների 5-6 սենյակներ (ապակիներով տարանջատված): Յուրաքանչյուր սենյակի չափերը ենթակա են որոշման կնքվելիք պայմանագրով:
6. Անհրաժեշտ են ընդհանուր մոտ 50 քմ մակերեսով 4-5 պահեստային սենյակներ (կարող են տարանջատված լինել սովորաբար թային տախտակներով)՝ ներառյալ օդորակումով ապահովված սերվերների սենյակ: Յուրաքանչյուր սենյակի չափերը ենթակա են որոշման կնքվելիք պայմանագրով :
7. Խոհանոցային տարածք՝ մոտ 15 քմ ընդհանուր մակերեսով:
8. Ընդհանուր մոտ 50 քմ մակերեսով տղամարդկանց և կանանց համար առանձին գուգարաններ՝ յուրաքանչյուրում 4-5 խցիկներով և լվացարաններով:
9. Վերահսկվող կայանատեղի 8 մեքենաների համար, ինչպես նաև մոտ 50-60 մեքենաների կայանման հնարավորություն (փողոցում, ներքին բակում):
10. Շինությունը պետք է գտնվի հասարակական տրանսպորտով հազեցած /հեշտ հասանելի վայրում:
11. Տարածքը պետք է Երևանի կենտրոնից ոչ շատ հեռու լինի (օպերայի շենքից ոչ ավելի քան մոտ 5-7կմ):
12. Վարձակալության նվազագույն ժամկետը պետք է լինի 5-7 տարի՝ հետագա երկարաձգման հնարավորությամբ:
13. Առնվազն 3 տարվա վարձակալության գինը պետք է ֆիքսված լինի (անհրաժեշտության դեպքում այն կարող է ինդեքսավորվել ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի համեմատ փոխարժեքի փոփոխության դեպքում):
14. Տարածքը պետք է պատրաստ լինի շահագործման ամենաուշը 2022թ. մարտի 31-ը:
15. Տարածքի սեփականատերերը (ներառյալ՝ իրական շահառուները) պետք է ունենան կայուն ֆինանսական վիճակ և անցնեն պատշաճ ստուգում փողերի լվացման դեմ պայքարի համատեքստում:

Մրցույթին դիմելու ընթացակարգ

Բաց մրցույթին մասնակցելու պայմանները և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, առաջարկի պայմանները (այսուհետ՝ Գնառաջարկ), ինչպես նաև այլ մանրամասները ներկայացված են ստորև:

- Հայտատուն ինքնուրույն է հոգում Գնառաջարկի պատրաստման և բաց մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի (միասին այսուհետ՝ Մասնակցության հայտ) ներկայացման ծախսերը, իսկ Կազմակերպիչը որևէ պատասխանատվություն և



պարտավորություն չի կրում այդ ծախսերի համար՝ անկախ մրցույթի ընթացքից և արդյունքներից:

- Կազմակերպիչն իրավունք ունի մերժել Մասնակցության հայտը, եթե Հայտատուն ուղղակի կամ անուղղակի կերպով խախտել է Կազմակերպչի կողմից սահմանված պայմանները:
- Գնառաջարկը բնօրինակի և կրկնօրինակի հետ միասին («Բնօրինակ» և «Կրկնօրինակ» նշումներով) ստանձված և ստորագրված ծրարով պետք է հասցեագրվի.

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան, 0023, Ազաթանգեղոսի 2ա

Հեռ. +37412 555-555

- Ծրարների վրա պետք է նշված լինի.

1. Իրավաբանական անձի դեպքում՝

Իրավաբանական անձի անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամար(ներ)ը, էլ. փոստը, ղեկավարի անունը, ազգանունը, պաշտոնը, մրցույթի անվանումը և ծածկագիրը:

2. Ֆիզիկական անձի դեպքում՝

անուն, ազգանուն, հայրանունը, բնակության հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլ. փոստը (եթե առկա է), մրցույթի անվանումը և ծածկագիրը:

3. Անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝

անուն, ազգանուն, հայրանունը, գործունեության հասցեն, հեռախոսահամար(ներ)ը, էլ. փոստը (եթե առկա է), մրցույթի անվանումը և ծածկագիրը:

- Գնառաջարկը պետք է ներկայացնել «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ՝ ք. Երևան, Ազաթանգեղոս 2Ա հասցեով՝ անձը հաստատող փաստաթղթով:
- Անհրաժեշտ է տրամադրել գնային առաջարկ ՀՀ դրամով, ըստ քառակուսի մետրի՝ հարկերը ներառյալ, ընդհանուր ամսական վարձավճարի հետ միասին՝ հարկերը ներառյալ: Ամսական առավելագույն բյուջեն սահմանափակված է գեղջված շուկայական գներով:
- 16. Գները պետք է լինեն վերջնական ամրագրված և, ինչպես մինչև պայմանագրի կնքումը, այնպես էլ պայմանագրի գործողության առնվազն 3 տարիների ընթացքում ենթակա չլինեն փոփոխման (անհրաժեշտության դեպքում այն կարող է ինդեքսավորվել ՀՀ դրամի՝ ԱՄՆ դոլարի համեմատ փոխարժեքի փոփոխության դեպքում):
- Գնառաջարկը լրացնելիս Հայտատուին իրավունք է վերապահվում լրացնել/մանրամասնել գնառաջարկի ցանկացած կետ/դրույթ՝ անփոփոխ թողնելով պահանջվող ծառայությունների բովանդակությունը:
- Հայտատուն կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ:
- Մրցույթի մեկնարկային գին և նախավճար չի սահմանվում:
- Սույն մրցույթի Հայտարարությամբ նշված վերջնաժամկետից ուշ ներկայացված հայտերը կմերժվեն:
- Հայտատուները մրցույթի ամփոփման և արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը կստանան մրցույթի հայտերի ամփոփումից հետո:

Այլ պարտադիր պայմաններ.

- Կազմակերպչի հետ փոխկապակցված Հայտատուների մասնակցությունն արգելվում է:
- Հայտերը, որոնք կհամարվեն ըստ էության մրցույթի պայմաններին համապատասխանող, կգնահատվեն ըստ առաջարկում ներկայացված պայմանների:
- Գնահատումը կկատարվի ըստ ներկայացված տեխնիկական և գնային առաջարկների:



- Տեխնիկական առաջարկն իր մեջ ներառում է Հայտատուի փորձը, շուկայում գրադեցրած դիրք և այլն:
- Մրցույթի հաղթող է ճանաչվելու այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ կառաջարկի լավագույն պայմաններ:
- Մրցույթի հաղթողի հետ կնքվում է պայմանագիր՝ նվազագույնը 5-7 տարի ժամկետով՝ հետագա երկարաձգման հնարավորությամբ:
- Լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև մրցույթի մանրամասներին ծանոթանալու համար դիմել հետևյալ հասցեով՝ haykush.yenokyan@finca.am

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերն են՝

Իրավաբանական անձի դեպքում՝

1. Գնառաջարկ (Հավելված 5),
2. Պետական գրանցման վկայականի պատճենն իր ներդիրներով,
3. Քաղվածք Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից,
4. Կանոնադրության պատճեն,
5. Առաջարկվող տարածքի սեփականության վկայականի պատճենը, լուսանկարները,
6. Տվյալներ ընկերության վավերապայմանների մասին (Հավելված 1),
7. Տնօրենի անձնագրի պատճեն,
8. Հայտարարագիր այն մասին, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են ու համապատասխանում են իրականությանը (Հավելված 2),
9. Գործընկեր կազմակերպությունների ցանկ, որոնց հայտատուն տրամադրել է նույնատիպ ապրանքներ/ծառայություններ (եթե առկա է),
10. Ամփոփ տեղեկություններ կազմակերպությանը տրված վկայականների, թույլտվությունների և այլ հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ (եթե առկա է),

Ֆիզիկական անձի դեպքում՝

1. Գնառաջարկ (Հավելված 6),
2. Առաջարկվող տարածքի սեփականության վկայականի պատճենը, լուսանկարները,
3. Տվյալներ Ֆիզիկական անձի մասին (Հավելված 3),
4. Անձնագրի պատճեն՝ ներառյալ հաշվառման հասցեն,
5. Հայտարարագիր այն մասին, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են ու համապատասխանում են իրականությանը (Հավելված 4),
6. Նույնատիպ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն (եթե առկա է),
7. Ամփոփ տեղեկություններ այլ հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ (եթե առկա է),

Անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝

11. Գնառաջարկ (Հավելված 6),
12. Պետական գրանցման վկայականի պատճեն,
13. Քաղվածք Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից,
14. Առաջարկվող տարածքի սեփականության վկայականի պատճենը, լուսանկարները,
15. Տվյալներ ԱԶ վավերապայմանների մասին (Հավելված 3),



FINCA®

16. Տնօրենի անձնագրի պատճեն,
17. Հայտարարագիր այն մասին, որ տրամադրված տվյալները ճիշտ և ամբողջական են ու համապատասխանում են իրականությանը (Հավելված 4),
18. Գործընկեր կազմակերպությունների ցանկ, որոնց հայտատուն տրամադրել է նույնատիպ ապրանքներ/ծառայություններ (եթե առկա է),
19. Ամփոփ տեղեկություններ ԱԶ-ին տրված վկայականների, թույլտվությունների և այլ հիմնավորող փաստաթղթերի վերաբերյալ (եթե առկա է),

Հավելված 2**ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ՝ կազմակերպության համար****ՍՈՒՅՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՅՄԱՆ Է****Մույնով հայտարարում և հավաստում եմ հետևյալը.**

1. Ես՝ _____, ա, և _____

_____ (ըն

կերության/ կազմակերպության լրիվ անվանումը՝ ըստ պետական գրանցման վկայականի)

(այսուհետ՝ Կազմակերպություն), որի ղեկավարն եմ հանդիսանում, սնանկ չեմք, սնանկության, լուծարման կամ վերակազմակերպման գործընթացում չեմք գտնվում, իմ և Կազմակերպության գույքը ծանրաբեռնված չէ այլ անձանց իրավունքներով, ձեռնարկատիրական գործունեությունը կասեցված չէ,

2. Ես և Կազմակերպությունը ընդգրկված չեմք որևէ դատական գործում, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարման գործընթացում, դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով մեղավոր չեմք ճանաչվել պրոֆեսիոնալ գործունեության շրջանակում իրավախախտում կատարելու մեջ,

3. ստորև նշված ամսաթվի դրությամբ ես, իմ ընտանիքի անդամները և Կազմակերպությունը չունենք փաստացի և/կամ հնարավոր շահերի բախում ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի՝ որպես Մրցույթի կազմակերպչի հետ, ինչը կարող էր սահմանափակել Մրցույթի կազմակերպչի կողմից մրցութային հայտերի անկողմնակալ և անաչառ գնահատումը, իսկ այդպիսիք հայտնաբերելու դեպքում պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Մրցույթի կազմակերպչին,

4. Ես և Կազմակերպությունը երբևէ չեմք մասնակցել որևէ ահաբեկչական գործունեության, ինչպես նաև փողերի լվացման հետ կապված գործարքների, դատարանի վերջնական ուժի մեջ մտած դատավճռով մեղավոր չեմք ճանաչվել խարդախություն կատարելու, կոռուպցիոն գործունեության կամ հանցավոր խմբավորման մեջ ներգրավվելու մեջ,

5. այն դեպքում, եթե տեղի կունենա վերը նշված դրույթներից որևէ մեկի հետ կապված փոփոխություն, ես պարտավորվում եմ անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Մրցույթի կազմակերպչին:

Ամսաթիվ _____

Ստորագրված և կնքված է _____

Անուն, ազգանուն, պաշտոնը

Ստորագրություն



Տվյալներ ֆիզիկական անձի/անհատ ձեռնարկատիրոջ վավերապայմանների մասին

ԲՈՒՈՐ ԴԱՇՏԵՐԸ ԼՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Ում՝ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ

Ումից՝ _____

(Ազգանուն, անուն, հայրանուն)

Ամսաթիվ՝ _____ / _____ / 20--թ.

1. Բնակության հասցե՝

2. Անձնագրային տվյալները՝

-Անձնագրի համարը՝

-Անձնագիրը տրված էկողմից

-Անձնագրի տրման ամսաթիվը՝

3. ՀԾՀ՝

4. ՀՎՀՀ (ԱԶ-ի դեպքում)

5. Բանկային տվյալները՝

Բանկի լրիվ անունը.

Բանկային հաշվի համարը՝

--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--

6. Հեռախոսահամարներ՝

Ֆիքսված՝ _____ Բջջային՝ _____

7. Էլ-փոստ. _____

Ստորագրված է՝

(անուն, ազգանուն)

ԳՆԱՌԱՋԱՐԿ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ամսաթիվ՝/...../2021թ.

ՈԻՄ՝ «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ-ին, ք.Երևան, Ազաթանգեղոսի 2ա

Ուսումնասիրելով Ձեր «Բաց մրցույթի հրավերը» և նրա հավելվածները, որի ստացումը սույնով հաստատում ենք, առաջարկում ենք տրամադրել տարածք «ՖԻՆԶԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ին վարձակալությամբ գլխամասային գրասենյակի տարածք տրամադրելու Բաց մրցույթ»-ով սահմանված պահանջներին համապատասխան հետևյալ պայմաններով՝

1. Տարածքի ընդանուր մակերես՝ ք.մ.
2. 1 ք.մ. –ի արժեք՝ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը
3. Ամսական վարձավճար՝ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը

համաձայն կցված Նախահաշվի, որը կազմում է սույն Գնառաջարկի մասը:

Գնառաջարկն ուժի մեջ է հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո 90 օր:

Ստորագրված և կնքված է՝

Կազմակերպության անվանումը՝

Ղեկավարի անուն, ազգանուն, Պաշտոնը՝

ՀՎՀՀ՝

Հասցե՝

Կոնտակտային տվյալներ՝



Ֆիզիկական անձի/ Անհատ ձեռնարկատիրոջ համար

ԳՆԱՌԱՋԱՐԿ ԵՎ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Ամսաթիվ՝/...../2021թ.

ՈԻՄ՝ «Ֆինքա» ՈւՎԿ ՓԲԸ-ին, ք.Երևան, Ագաթանգեղոսի 2ա

Ուսումնասիրելով Ձեր «Բաց մրցույթի հրավերը» և նրա հավելվածները, որի ստացումը սույնով հաստատում եմ, ես՝ ներքոստորագրյալս, առաջարկում եմ իրականացնել «ՖԻՆՔԱ» ՈԻՎԿ ՓԲԸ-ին գլխամասային գրասենյակի տարածք վարձակալությամբ տրամադրելու Բաց մրցույթ»-ով սահմանված պահանջներին համապատասխան հետևյալ պայմաններով՝

- 4. Տարածքի ընդանուր մակերես՝ ք.մ.
- 5. 1 ք.մ. –ի արժեք՝ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը
- 6. Ամսական վարձավճար՝ ՀՀ դրամ՝ ներառյալ հարկերը

համաձայն կցված Նախահաշվի, որը կազմում է սույն Գնառաջարկի մասը:

Գնառաջարկն ուժի մեջ է հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո 90 օր:

Ստորագրված է՝

Անուն, ազգանուն, հայրանուն

Անձնագիր՝

ՀԾՀ՝

Հասցե՝

Կոնտակտային տվյալներ՝